

ՌԱՔԻՆԴՐԱՆԱԹ ԹԱԳՈՐԻ ԱՐՁԱԿ ՊՈՆՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ

ՄԵՐԻ ՄԱՔՍԱՊԵՏՅԱՆ

Հայ-հնդկական մշակութային կապերի ուշագրավ, տակավին չուսումնասիրված էջերից են հնդիկ մեծ բանաստեղծ Ռաբինդրանաթ Թագորի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները՝ հայ հասարակական-գրական մտքի գնահատմամբ 1913 թ. սկսած՝ ժամանակ առ ժամանակ հայ պարբերականներում լույս տեսնող Թագորի ստեղծագործությունների թարգմանությունները չէին կարող կատարել այն գերը, որ կատարեցին նրա գործերի ամբողջական հայերեն ժողովածուները:

Հնդիկ բանաստեղծի ստեղծագործությունների թարգմանիչներից էր Համլիկ Թումանյանը (1896—1937), Հովհաննես Թումանյանի որդին: 1916 թ. Թիֆլիսում նրա թարգմանությամբ (կատարված ռուսերենից) լույս տեսավ Թագորի մանկական բանաստեղծությունների հայերեն առաջին ժողովածուն՝ «Մահիկը»: Հայ մանուկներին ծանոթացնելով հնդիկ բանաստեղծի ստեղծագործությանը, Համ. Թումանյանը գրքի առաջարանում նրան անվանում է «աշխարհահռչակ բանաստեղծ-մտածող, որը լինելով ինքնատիպ, հազվագյուտ արեւելի, անշափ սիրում է բնությունը, և իր երկերի մեջ մարգարտաշար երևում են բնության բոլոր զարդերն ու իր պայծառ մտքերը միատեղ հյուսված»¹: Հենց այս աշխատանքում նկատվում է Համ. Թումանյանի թարգմանական ձիրքը, լեզվի նուրբ զգալիությունը, որն անհամեմատ ցայտուն դարձավ նրա հետագա թարգմանություններում: Արտաքուստ թվում է, թե Թագորի արձակ բանաստեղծությունների թարգմանությունը մեծ դժվարություն չի ներկայացնում, քանի որ չկա շափ, հանգ, լեզուն պարզ է, պատկերավոր ու հասկանալի: Իրականում Թագորի արձակ ստեղծագործություններն ունեն հատուկ տրամադրություն, անորսալի, բայց և անդիմադրելի յուրօրինակ հմայք, մի բան, որ հասկանալի պատճառով դժվար է փոխանցել այլ լեզվի: Բնականաբար, երիտասարդ թարգմանիչն միշտ չէ, որ հաջողվել է հաղթահարել այդ դժվարությունը: Սակայն Համ. Թումանյանը կարողացել է հայ ընթերցողին հաղորդել Թագորի մանուկ հերոսի (որի աչքերով դիտվում է կյանքը) աշխարհը և մարդկանց ճանաչելու ծարավը, մանկական անմիջականությունն ու վառ երևակայությունը: Այս իմաստով նրա առավել հաջողված թարգմանություններից են «Կոշումը», «Ամպերն ու ալիքները», «Մադիկների դպրոցը»: Ահա մի հատված վերջին բանաստեղծությունից.

Երբ անձրևաբեր ամպերը որոտում են երկնքում,
Եվ հունիսի հեղեղներն են տեղում,
Եվ արևելքի խոնավ քամին սլանում է դաշտերի երեսով,
Որ բամբուկների մեջ իր պկուն ածի,—

¹ Ռ. Տ ա գ ո Ր, Մահիկը, Թիֆլիս, 1916, էջ 5.

Այգ ժամանակ հանկարծ չգիտեմ որտեղից,
Դուրս են ընկնում հազարավոր ծաղիկներ
Եվ ուրախ-ուրախ վազվզում ու պարում են կանաչի վրա...

«Մահիկից» հետո Համ. Թումանյանը ձեռնարկում է սիրո և կյանքի պոեմներին՝ «Պարտիզպանը» ժողովածուի թարգմանությունը, այս անգամ արգեն անգլերենից, վերջինս Թագորի փոխադրությունն էր բենգալերեն բնագրից։ Այգ թարգմանությունից առանձին կտորներ նախ հրատարակվում են Թիֆլիսում², ապա վիեննայում³, որտեղ նույն Համ. Թումանյանի թարգմանությամբ տպագրվեցին նաև հատվածներ Թագորի «Գիթանջալի» արձակ բանաստեղծությունների ժողովածուից։ «Արեգի» խմբագրականում ասված է. «Հուլյո կա նրա երգերի մեջ, ոգի և զգացում, անկեղծություն և անխարդախ տրամադրություն։ Թագորը կրթվել է միջազգային դրականության վրա և իր երկրի գրականությունը տանում է դեպի համամարդկային տեսակ։ Այս սկզբունքի, այս ձգտումի մեջ է նրա մեծությունը և նրա գրականությունը գեղեցիկ է այնքան, որքան արտահայտիչ է մարդկային ներդաշնակությունը»⁴։ 1922 թ. վիեննայում, Համ. Թումանյանի թարգմանությամբ, առանձին գրքով լույս է տեսնում «Պարտիզպանը», որի առաջաբանում թարգմանիչը Թագորին անվանում է «Արևելքի խորության, իմաստության մարմնացում, Գանգեսի ափերի ամենակուլտուրական, սուրբ մարդ»⁵։ «Պարտիզպանի» թարգմանությունն արդեն գրաքննադատական մտքի բնորոշմամբ երևույթ էր հայ իրականության մեջ։ Հաջողության գաղտնիքը թարգմանչի որոշակի փորձի, լեզվազգացողության մեջ էր. նա տիրապետում էր ոչ միայն հայերենի, այլև անգլերեն լեզվի նրբերանգներին։ Հմուտ թարգմանիչն այլևս չէր ջանում բառ առ բառ ամեն ինչ հայերենի վերածել։ Այնտեղ, որտեղ հերավի անհնար է թարգմանել պարկերավոր, միայն անգլերենին հատուկ դարձվածք, նա գտնում է նույնի հայերեն համարժեքը։ Համ. Թումանյանի թարգմանությունները հիմնականում պահպանել են անգլերեն բնագրի ու բանաստեղծական հնչեղությունը։ Այսպես, օրինակ՝

Սիրտս՝ անբնակ մի թռչուն, իր եթերը գտել է քո ս չերում։
Նրանց մեջ է օրորոցն արշալույսի, էնտեղ է թագավորությունն
աստղերի։

Ու նրանց խորքերն են սուզվում իմ երգերը։
Թող միայն ճախրեմ էդ երկնքում՝ նրա անապատ անհունության մեջ։
Թույլ տուր միայն ճեղքեմ նրա ամպերն ու սավառնեմ նրանց
արեգնաճեմ, շող ճաճանչներում⁶։

² «Հորիզոն», Թիֆլիս, 1916, № 120, «Մշակ», 1916, № № 146—151.

³ «Արեգ» (գրական-գիտական ամսագիր, ապա երկշաբաթաթերթ), 1922, № 5, էջ 287, № 6, էջ 356, № 8, էջ 483, № 9, էջ 532, № 10, էջ 605, № 12, էջ 764, 1923, № 10, էջ 610, 1924, № 4, էջ 200.

⁴ Նույն տեղում, 1922, № 12, էջ 764.

⁵ Խ. Տագոր, Նրկերի ժողովածու, Ա գիրք, վիեննա, 1922, էջ 2, Համ. Թումանյանը ստադիո էր թարգմանել Թագորի նաև մյուս ստեղծագործությունները, «Պարտիզպանը» հնդիկ գրողի երկերի առաջին հատորն էր միայն։ Այս ուղղությամբ թարգմանչի մյուս մտահղացումները մեզ անհայտ պատճառով չիրականացան։

⁶ Նույն տեղում, էջ 61.

Մարդ-անհատին կաշկանդող շղթաները փշրելու տրամադրություն արտահայտող Թագորի բանաստեղծություններն են, որ հատկապես հաջող են թարգմանված: Ընդվզման պոռթկումով են տոգորված «Պարտիզպանի» «է՛յ, խելառ, թունդ հարբած կոնծաբան», «Ո՛չ ընկերներ, ինչ ուզում եք ասեք...», «Ձգեցիր ինձ ու գնացիր քո ճամփով», «Ո՛չ ոք անմահ չէ, եղբայր», «Մի մարդ, որ ճգնավոր էր ուզում դառնալ» պոեմները, որոնք Համ. Թումանյանի լավագույն թարգմանություններն են: Սա վկայում է միաժամանակ թարգմանչի թեմատիկ նախասիրության մասին.

էյ, խելառ, թունդ հարբած կոնծաբան՝

եթե դոներդ բաց ես անում քացով ու հիմար ես ձեացնում քեզ
ամենքի առաջ,

եթե մի գիշերվա մեջ դատարկում ես քսակդ ու ծաղրում

խելացիությունը,

եթե դու թափառում ես տարօրինակ կածաններով ու զվարճանում
ցանցառ, անմիտ բաներով,

Գործ չունիս խելքի և իմաստի հետ,

եթե փոթորիկի ժամին առաքաստդ պարզելով մրրիկի հանդեպ
չարդում ես ղեկդ երկու մասի,—

... Ապա ես հետևում եմ քեզ, ընկեր, գալիս եմ հարբելու

քեզ հետ ու ջհանդամը կորչեմ, հերն անիծած:

... Երդվում եմ հրաժարվել էս վայրկյանից իսկ արժանավոր

մարդկանց շարքը դասվելուց:

Դեն եմ շարտում հպարտությունս՝ իմ գիտությունս ու կարողությամբ

դատելու — ուն է լավ, որը վատ:

Ես փշրում եմ հուշերիս արտոսրալի անոթը՝ շաղ տալով արցունք-
ներիս վերջին կաթիլը:

Ալ պտուղների պես կարմրին տվող գինու փրփուրը կսուզվեմ ու
նրանով կլուսավորեմ իմ ծիծաղը:

Ես դիտմամբ պատառ-պատառ եմ անում քաղաքացու իմ ցուցանակը:

Ու սուրբ երդում եմ տալիս լինել անպիտան, հարբած ու

ջհանդամը կորչեմ, հերն անիծած⁷:

«էյ, խելառ, թունդ հարբած կոնծաբանը» այսպես կոչված՝ ընդվզման շարքի ամենաուժեղ բանաստեղծություններից է: Հայերեն թարգմանությունում այդ տրամադրությունն ավելի է շեշտվել, սոցիալական երանգ ստացել: Այսպես. եթե բնագրից այն տպավորությունն է ստացվում, թե բանաստեղծության քնարական հերոսը երբեք⁸ երգում կտա լինել հարբեցող, գրողի ծոցն ուղարկելով ամեն տեսակ խոհեմություն ու ողջամտություն. I' ll take the holy vow to be worthless, to be drunken and go to dogs. (ես սրբազան երդում կտամ լինել անպիտան, լինել հարբած ու կործանվել), ապա Համ. Թումանյանի թարգմանությամբ դա ո՛չ թե կատարվելիք, այլ արդեն վճռված հարց է. «ու սուրբ երդում եմ տալիս լինել անպիտան, լինել հարբած ու ջհանդամը կորչեմ, հերն անիծած»:

⁷ Նույն տեղում, էջ 82:

⁸ Այս և հետագա ընդգծումները մերն են—Մ. Մ.:

Հարազատ մնալով նշված թեմատիկ նախասիրությանը, Համ. Թումանյանը նման դեպքերում ընտրում է բառի ամենաուժեղ նշանակությունը: Եթե, օրինակ, հեղինակն ասում է. *The badge of the civil and staid I'll tear into shreds for the nonce* (ես ժամանակավորապես պատառ-պատառ կանեմ քաղաքավարի ու հավասարակշռված մարդու խորհրդանիշը), Համ. Թումանյանի թարգմանությունում կարդում ենք. «Ես դիտմամբ պատառ-պատառ եմ անում քաղաքացու իմ ցուցանակը»: Նախ՝ այստեղ ևս թարգմանիչը խոսում է ոչ թե կատարվելիք, այլ կատարվող գործողության մասին: Բացի այդ, *civil* բառը անգլերենում ունի քաղաքացի, քաղաքացիական, քաղաքավարի, դաստիարակված նշանակությունը: Համ. Թումանյանը ընտրում է ընդվզում արտահայտող տարբերակը. թարգմանությունում կարդում ենք. «Ես դիտմամբ պատառ-պատառ եմ անում քաղաքացու իմ ցուցանակը»: Եթե նա ընտրեր *civil* բառի այլ իմաստը և բաց չթողներ *staid* (հավասարակշռված) բառը, կստացվեր, որ Թագորի քնարական հերոսը պատառ-պատառ է անում քաղաքավարի ու հավասարակշռված մարդու խորհրդանիշը և ոչ թե «քաղաքացու ցուցանակը», ինչպես Համ. Թումանյանի մոտ է:

Նույն նախադասության *for the nonce* արտահայտությունը կարելի է թարգմանել և՛ ժամանակավորապես, և՛ դիտմամբ: Թարգմանիչը ընտրում է բառի մյուս՝ իր համար ավելի ընդունելի նշանակությունը. «Ես դիտմամբ պատառ-պատառ եմ անում...»: Եթե Թագորի բանաստեղծության հերոսն այդ անում է «այս վայրկյանին» (*this moment*), գուցե և զղջալու պայմանով, ապա Համ. Թումանյանը գրում է. «էս վայրկյանից իսկ», այսինքն՝ ավելի երկար ժամանակով, գուցե և ընդմիջտ:

Թարգմանչի անհատականությունը միշտ էլ իր կնիքն է դնում թարգմանվող գործի վրա: Եթե կարելի է ընտրել «կեղծ տատանում» կամ «խղճի սուտ խայթոց» արտահայտություններից մեկը, Համ. Թումանյանն ընտրում է երկրորդը: Եթե բնագրի մի արտահայտություն կարելի է թարգմանել և՛ որպես «թեթևամտության պոթկում», և՛ որպես «խելագարման ցասում», հայ թարգմանիչը կրկին նախընտրում է առավել ուժեղը՝ «խելագարման ցասում»-ը: Բացի այդ՝ Համ. Թումանյանի թարգմանությունների լեզուն կիրթ է, բարեհունչ: Վերահիշյալ բանաստեղծության մեջ ունենք *If you... snap your fingers at prudence* (եթե դու թքում ես ողջամտության վրա) արտահայտությունը: Թարգմանիչը գտել է նույն արտահայտության ավելի զուսպ, բայց և ստույգ տարբերակը. «Եթե... ծաղրում ես»: Ծիշտ է ընտրված նաև *go to dogs* անգլիական արտահայտության հայերեն համարժեքը (սնանկանալ, կործանվել): Համ. Թումանյանն այդ կրկնվող տողը թարգմանում է միայն հայերենին հատուկ, միաժամանակ բնագրի իմաստը ճիշտ վերատադրող արտահայտությամբ. «Ջհանդամը կորչեմ, հերն անիծած»: Քննվող թարգմանություններում, անտարակույս, կան այսօր արդեն հնացած որոշ բառեր և արտահայտություններ, որոնք, սակայն չեն նսեմացնում գործի ամբողջականությունը և, կարելի է ասել, Համ. Թումանյանը այսօր էլ Ռարինդրանաթ Թագորի «Պարտիզպանը» սիրո և կյանքի պոեմների լավագույն թարգմանիչն է: Սովետական Հայաստանում նրա «Պարտիզպանը» վերահրատարակվեց 1955 և 1961 թթ.:

«Պարտիզականը» ժողովածուն ունեցել է նաև մեկ այլ թարգմանիչ. դա սփյուռքահայ հասարակական-թատերական գործիչ Գասպար Իփեկյանն է (1881—1952), նրա թարգմանությամբ «Պարտիզականը» լույս է տեսել երկու անգամ՝ 1919 թ. Թեհրանում և 1948 թ. Բեյրութում: Վերջին հրատարակությունն օժտված է թարգմանչի ընդարձակ առաջաբանով, ուր ասված է. «Թուկորը եղավ հրաշալի սրինգը դուրբական, որուն մեջեն բանաստեղծությունը հնչեց ամենավճիտ, աստվածային վսեմ ներշնչումով և տարածվեցավ ու հասավ աշխարհի շորս ծագերուն: Այն եղավ պարզ, շիտակ, համայնական և իր անհատականության հմայքը գրավեց իրեն սիրտեր, հեռու անծանոթ անկյուններեն: Երբ վերջին համամարդկային սպանդի օրերուն ան դիմավորեց մահը խաղաղ ու ժպտուն, եղեռնահալած մարդկությունը իր մահատանջ հոգիի խորեն ողբաց անոր անդարձ մեկնումը զգալով, որ արև կյանք մը մայրամուտ թեքվեցավ ու սուզվեցավ ստվերներու մեջ ոսկյա»⁹:

Չունենալով Համ. Թումանյանի թարգմանության գեղարվեստական բարձր արժանիքները, այսուհանդերձ, Իփեկյանի թարգմանության մեջ կա մի հանգամանք, որն անժխտելի է. դա նրա անկեղծ սերն ու անխառն հիացմունքն է հեղիկ մեծ բանաստեղծի ստեղծագործության նկատմամբ:

Թագորի արձակ բանաստեղծությունների մյուս ժողովածուն՝ «Գիթանջալին» հայերեն առաջին անգամ լույս է տեսել 1954 թ. Թեհրանում: Թարգմանիչը՝ Երվանդ Փափազյանը (ծնվ. 1927 թ.) իրավացիորեն նշում է. «Թագորի երգերը լուկ բանաստեղծություններ չեն, այլ տաղեր են, որոնց բառերի միջից լսվում է մեղմանուշ մեղեդին. կարելի է թարգմանել բառերը, կարելի է տալ հեղինակի միտքը, բայց միշտ կարելի չէ բառերի մեջ առաջ բերել այն երաժշտությունը, որ կա բնագրի մեջ: Նկատի ունենալով այս կետը, պետք է ընդունել, որ ներկա թարգմանության մեջ կան տաղեր, որ զուրկ են այն կատարելությունից, որը մտքի անշեղ փոխանցումի, լեզվի վայելուշ կազմության և գրվածքի երաժշտության միախմբումիցն է առաջանում: Այն տեղերում, ուր կարելի չի եղել պահել այս երեքի ներդաշնակությունը, չարյաց փոքրագույնը համարել եմ զոհել երկու վերջինները, նախամեծար համարելով անփոփոխ պահել հեղինակի մտքերը»¹⁰:

Ի պատիվ Փափազյանի պետք է ասել, որ նրան հիմնականում հաջողվել է ամենակարևորը. ընդհանուր առմամբ ճիշտ վերարտադրել Թագորի ասելիքը, նրա արձակ բանաստեղծություններին բնորոշ յուրատեսակ ներդաշնակությունը, ուրույն ոճը: Այսպես, օրինակ.

Ես հրավեր էի ունեցել աշխարհի այս տոնահանդեսը գալու,

Եվ այսպիսով էիմ կյանքը օրհնյալ:

Իմ աչքերը տեսել են ու իմ ականջները լսել:

Իմ բաժինը եղել է այն, որ այս խնջույքում նվազեմ իմ նվազարանով,

Եվ ես արել եմ այն բոլորը, որ կարող էի:

Այժմ ես հարց եմ տալիս, արդյո՞ք վերջապես եկել է այն ժամանակը,

Երբ ես պիտի ներս մտնեմ քո դեմքը տեսնելու ու իմ լուռ

ողջույնը քեզ մատուցելու¹¹:

⁹ Ր ա պ ի ն տ ր ա ն ա թ Թ ա կ ո Ր, Պարտիզականը, Թարգմանություն Գ ա ս պ ա Ր Ի փ ե կ յ ա ն, Պեյրութ, 1948, էջ 16,

¹⁰ Ր. Թ ա գ ո Ր, Գիթանջալի, Թեհրան, 1954, էջ 6, 7

¹¹ Ր. Տ ա գ ո Ր, Գիթանջալի, Երևան, 1961, էջ 132,

1961 թ. Թագորի ծննդյան 100-ամյակի առթիվ «Գիթանջալի» ժողովածուն Ն. Փափազյանի թարգմանությամբ հրատարակվեց նաև Սովետական Հաստատում: Նույն թվականին այն լույս տեսավ Թեհրանում, հնդկահայ դործիչ Ա. Ալլահվերդյանի թարգմանությամբ: Այստեղ ուշագրավն այն է, որ Կալկաթայում բնակվող թարգմանիչը մոտիկից հաղորդակից էր եղել Թագորի նկարագրած աշխարհին, այն մարդկանց, որոնք նրա երկերի հերոսներն էին դարձել: Դեռ ավելին. Ալլահվերդյանը բազմիցս լսել է Թագորի ձայնագրված երգերը և նույնիսկ տեսել նրան «Պարող աղջկա պաշտամունքը» դրամայում (հեղ. Լ. Թագոր), բուդդայական արքայի դերում:

Թագորի ստեղծագործությունը վաղուց է հետաքրքրել Ալլահվերդյանին: Դեռ 1929 թ. նա իր հայրենակիցներին է ներկայացրել առանձին կտորներ «Գիթանջալիից», որոնք լույս են տեսել «Տաթև» տարեցույցում¹²: Նա դեռ այն ժամանակ մտադրվել էր թարգմանել Թագորի ամբողջ ժողովածուն, սակայն այդ նրան հաջողվեց երեսուն տարի անց միայն:

Վերլուծելով Թագորի գրական գործունեությունը և բարձր գնահատելով նրա արվեստը, թարգմանիչը գրում է. «Նրանք, որոնք ծանոթ չէին Բրահմո-Սամաջ»¹³ վարդապետությանը և նրա (Թագորի) տաղանդավոր մեծ հոր և նույնքան հուշավոր հոր փայփայած գաղափարներին ընդհանրապես ու ջիբանդեբատայի¹⁴ վարդապետությանը մասնավորապես, հակամետ էին խորհրդապաշտության տարր տեսնելու նրա մեջ, ինչ խոսք, ընդունելով այդ արձակ-քերթված մտորումների գեղեցկությունը, թարմությունը, ուժգնությունը, ոճի դյուլթանքը, աննման պատկերավորությունը և բնության նկարագրությունների վսեմ նրբությունը»¹⁵:

Ալլահվերդյանը Թագորի հայ այն թարգմանիչներից է, որի անհատականությունն իր ընդգծված դրոշմն է դրել նրա կատարած աշխատանքի վրա: Տխրություն, մարդկային խորը թախիծ է բուրում նրա թարգմանություններից այն դեպքում, երբ Թագորը լավատես է նույնիսկ անխուսափելի մահվան մասին խոսելիս: Պատահական չէ, որ Ալլահվերդյանը դիմել է հատկապես «Գիթանջալիին», որի խոհական-փիլիսոփայական երգերը կարելի է յուրովի վերծանել, ցանկության դեպքում նույնիսկ միաստիկա տեսնել նրանց մեջ (ինչպես և հաճախ արվում էր աշխարհի շատ քննադատների ու թարգմանիչների կողմից) կամ պարզապես մտորումներ՝ մարդկային կյանքի վաղանցիկության և բնության գեղեցկության ու հավերժության մասին: Ալլահվերդյանը, սակայն, իր իսկ խոստովանությամբ, խորհրդապաշտության տարր չի տեսնում Թագորի պոեմներում, այլ հիանում է նրա դյուլթիչ ոճով, բնության նկարագրությունների վսեմ նրբությամբ: «Նրանք, ովքեր ճիշտ էին հասկանում Թագորին և նրա անցած ուղու բոլոր փուլերը, առանձնահատուկ տեղ են հատկացնում «Գիթանջալիին», որի մեջ արծարծված կատարյալ ու հավերժական կյանքի և բնության հետ միանալու վսեմ մտքերից բուրում է նաև որոշ շափով քրիստոնեական շունչ»¹⁶: Ահա այստեղ է ամփոփված Ալլահ-

¹² «Տաթև», 1929, էջ 225:

¹³ Բրահմո-Սամաջ—նեֆորմիստական կրոնական ընկերություն, որի գործիչները կոչ էին անում հրաժարվել ուղղափառ հինդուիզմի ավանդույթներից:

¹⁴ Բարձրյալի կոչումներից մեկը:

¹⁵ Բ. Թագոր, Գիթանջալի, Թեհրան, 1961, էջ Գ:

¹⁶ Նույն տեղում:

վերդյան-թարգմանչի հավատամքը. նա միանգամայն ճիշտ է վերծանում «Գիթանջալի» հիմնական միտքը. կատարյալ ու հավերժական կյանքի և բնության հետ միաձուլվելու տենչ, Սակայն, ինչպես արդեն ասվեց, եթե Թա-լորի քնարական հերոսը անվարան է գնում դեպի հավերժություն, նույնը չի կարելի ասել նրա հայ երկվորյակի մասին: Անհույս թախիծ, մորմոք կա Ալլահվերդյանի թարգմանություններում, ընդ որում, դա արվում է առանց բնագրից դգալի շեղումներ կատարելու: Բանաստեղծությունն արտաքուստ թագորյան է մնում, սակայն հեղինակի կորուվի ու առնական ձայնի մեջ մտել են խոր տխրության անորսալի շեշտեր: Արդյոք դրա պատճառը տարագիր հայի դառն ճակատագիրը չէ՞, որի ծնողների աճյունը հանգչում է թեև հյուր-ընկալ, բայց հեռավոր ու օտար հնդկական հողում և որոնց հիշատակին է ձոնել թարգմանիչն իր աշխատանքը¹⁷:

Այդ առումով բնորոշ է «Բաժանման կսկիծը» բանաստեղծությունը, որը թեև տրամադրությամբ ու ձևով թագորյան է, սակայն թախիծն զգալիորեն խտացված է.

Բաժանման կսկիծն է, որ տարածվում է ամբողջ աշխարհում,
Մենուդ տալով անթիվ ձևերի անհուն երկնքում:
Բաժանման այս վիշտն է, որ ամբողջ գիշեր լուծվյամբ անթարթ
Նայում է աստղից-աստղ, դառնալով քնարերգական՝
Հուլիսյան անձրևոտ խավարում խշխշացող տերևների մեջ:
Լայնասփյուռ այս ցավն է, որ խորանում է սիրո և տենչանքի,
Տառապանքների և ուրախությունների մեջ մարդկային տներում,
Նվ այս է, որ հավերժ հալվում է ու բանաստեղծիս սրտից
երգերով հոսում¹⁸:

Հարազատ մնալով բնագրին, թարգմանիչն, այդուհանդերձ, տեղափոխել է ստեղծագործության տրամաբանական շեշտը: Հեղինակն ընդգծում է ոչ թե աշխարհով մեկ տարածվող բաժանման, անջատման ցավի գաղափարը, այլ այն, որ այդ ցավն է, որ հավերժորեն հալվելով, բանաստեղծի սրտից հորդացող երգի է վերածվում, այլ խոսքով՝ բաժանման այդ ցավն է իր՝ բանաստեղծի քնարական ստեղծագործության ակունքը: Այնինչ թարգմանիչը շեշտը գնում է հենց այդ ցավի՝ վրա: Նա աշխարհում ամենուրեք սփռված անջատման ցավ է տեսնում, էականը դա՞ է նրա համար և ոչ թե այն, որ այդ ցավը անթիվ, անհամար կերպարներ է ծնում անհուն երկնքում և ստեղծագործության ակունք դառնում բանաստեղծի համար: Թագոռն ասում է.

It is the pang of separation that spreads throughout the world and gives birth to shapes innumerable in the infinite sky. (Բաժանման սուր ցավն է, որ տարածվում է աշխարհով մեկ և ծնունդ տալիս անհաշիվ ձևերի անհուն երկնքում):

Սուր ցավը տարածվում է և՛ ծնունդ տալիս. այս նրբերանգն է, որ փոխվել է թարգմանչի գրչի տակ: Ալլահվերդյանն իր աշխատանքը կատարել է ամենայն բարեխղճությամբ, անուրանալի ձիրքով: Նա հարազատ է մնա-

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 50:

ցել անգլերեն բնագրի յուրաքանչյուր արտահայտությանը, սակայն բանաստեղծությունից բուրոզ թախիծն, այսուհանդերձ, խտացել է: Այդ նրբերանդր ստացվել է միայն՝ այն պատճառով, որ առաջնությունը տալով «աշխարհով մեկ սփռվող ցավին», թարգմանիչը նրան ստորագրասում է ծնունդ առնող «անթիվ ձևերը»:

«Բաժանման կսկիծն է, որ տարածվում է ամբողջ աշխարհում, ծնունդ տալով անթիվ ձևերի», — ասում է նա: Այնինչ հեղինակը շեշտում է. «բաժանման ցավն է, որ տարածվում է ամբողջ աշխարհում և՛ ծնունդ տալիս անթիվ ձևերի»:

Այնուհետև. «Բաժանման այս վիշտն է, որ ամբողջ գիշեր լուսնամբարթ նայում է աստղից-աստղ, դառնալով քնարերգական»:

Իսկ ընթացում ասված է. It is this sorrow of separation that gazes in silence all night from star to star and becomes lyric. (Բաժանման այս վիշտն է, որ ամբողջ գիշեր լուսն անթարթ նայում է աստղից-աստղ և դառնում բանաստեղծություն):

Սա Ալլահվերդյանի թարգմանության բնորոշ կողմերից մեկն է: Անժխտելի է, որ նա կատարելապես տիրապետում է թե՛ անգլերենի հնչերանգներին, թե՛ թարգմանվող նյութին ընդհանրապես: Ապրելով Կալկաթայում, նա մոտիկից ծանոթ է եղել բենգալացիների ազգային բնավորությանը, կրոնական ծեսերին, նրանց կենցաղին ու բարքերին, և դա, անշուշտ, իր դրական կնիքն է դրել նրա աշխատանքի վրա:

«Պարտիզպանի» և «Գիթանջալիի» վերը նշված հայերեն ժողովածուներում թերևս կան բանաստեղծություններ, որոնք այսօր կորցրել են փրենց թարմությունը, դժգունել, սակայն քիչ չեն նաև այնպիսիները, որոնք ներկայումս էլ կարող են թարգմանական բարձր արվեստի օրինակ ծառայել:

Այդ բարձրարվեստ թարգմանությունները նշանակալի դեր կատարեցին հայ հասարակայնությանը աշխարհի մեծ բանաստեղծներից մեկի ստեղծագործություններին ծանոթացնելու գործում, միաժամանակ գաղափար տալով այդ բանաստեղծին ծնող ժողովրդի հոգեկան կերտվածքի, բարոյական նկարագրի, ազգային փոփոխության մասին: Մյուս կողմից այսօր այդ գործերն օգնում են տեսնելու մեր թարգմանական գրականության անցած ճանապարհի մի հատվածը՝ կապված Ռաբինդրանաթ Թագորի մուտքի հետ հայ իրականություն:

ПОЭМЫ В ПРОЗЕ РАБИНДРАНАТА ТАГОРА НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

МЭРИ МАКСАПЕТЯН

Резюме

Перевод произведений Р. Тагора на армянский язык, их оценка армянской общественной и литературной мыслью является одной из интересных и почти неизученных страниц истории армяно-индийских литературных связей.

Армянам Тагор стал известен в 1913 г., когда за сборник стихов в прозе «Гитанджали» он был удостоен Нобелевской премии.

Первый сборник его стихотворений на армянском языке «Лунный серп» вышел в свет в 1916 г. в Тифлисе в переводе Ам. Туманяна (с русского). В 1922 г. в Вене была издана книга поэм Тагора «Садовник» в том же переводе, но уже с английского языка (перевод сборников поэм «Садовник» и «Гитанджали» с бенгали на английский был сделан самим Тагором). Здесь Ам. Туманян заявил о себе как даровитый переводчик, и его «Садовник» стал заметным явлением в армянской литературной жизни. В Советской Армении он был переиздан дважды — в 1955 и 1961 гг.

Из переводчиков «Гитанджали» особо следует упомянуть имя А. Аллахвердяна. В его переводе «Гитанджали» вышло в свет в 1961 г. в Тегеране — перевод с английского. Аллахвердян родился и жил в Калькутте, на родине Тагора, поэтому близко знаком с прототипами героев его произведений, знает их национальный характер, культуру, нравы.

К переводу поэм Тагора обращались также Е. Папазян («Гитанджали» — Тегеран, 1954, Ереван, 1961) и Г. Ипекян («Садовник» — Тегеран, 1919, Бейрут, 1948).